

— Կեցցէ մեր Սպարապետը:

(Երբ մեկնելու կը պատրաստուէին, բեմին մէկ կողմէն կը սկսի զօրանցքը կեանքի ուժեղուն, Ֆերմակ հագուած սիրուն աղջիկներ եւ տղաքներ, իրենց կրծքերուն վրայ գրուած փայլուն գիրերով),
Մաքուր Մնունդ, Արեւ, Մաքուր և Անաղարտ Օդ, Մաղկախտի Պատուաստ, Հակաթոյն, Մաքրութիւն, Բաղնիք, Գիտական Նորութիւններ եւն, եւն:

Թափօրը կը սկսի շրջիլ մահուան սպայակոյտին բոլորտիքը մինչ անոնք սարսափահար կը դիտեն եւ յետոյ գոռում գոչումներով կը դիմեն փախուստի: Մահը կը մնայ առանձին, շրջապատուած կեանքի եւ բժշկական գիտութեան զինուորներէն:

Մահը կը խելագարի, առանձին Թողուած հրամանատարի մը պէս աջ, ձախ հրամաններ կ'արձակէ, բայց ի գո՛ւր: Ամէն կողմէ կը ծաղրուի: Յետոյ յուսահատ եւ ճարահատ իր սուրը կը քաշէ, կ'իյնայ անոր վրայ ու կըսեմնի:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր Ը Կ ' Ի Զ Ն Է

ՎԵՐՋ

ԲԺ. Ա. Ս. ԱՐԷԼԵԱՆ

ՅՂԻ ԿՆՈՋ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

(Երկրորդ և վերջին մաս)

Դժբախտաբար առողջապահական պարզ հրահանգները բաւական չեն ամէնուն համար: Բնականոն յղութենէն դուրս, կան այն տեսակ բացառիկ պարագաներ, երբ անհրաժեշտ կը դառնայ, որ բժիշկը քայլ առ քայլ հետեւի յղութեան ընթացքին, որպէսզի պէտք եղած միջոցները ձեռք առնելով կարենայ ազատել թէ մօրց և թէ տղուն կեանքը:

Բարդութիւններու պատճառ կրնան ըլլալ մայրը, տղան և «ընկերը» Թաղանթներով միասին:

Մօրը յատուկ բոլոր հիւանդութիւնները իրենց ազդեցութիւնը ունին յղութեան ընթացքին և սաղմին վրայ:

Այսպէս՝ Թոքախտը, որտի հիւանդութիւնները, միզային գործարաններու բորբոքումը, ալալիւմինը, սիֆիլիսը, շերմամիդութիւնը, կոնքի ոսկորներու անբնականութիւնը, արգանդի ուռերը, ալքոլա-

մոլութիւնը, հայրն: Բուժմանքի նեղ էջերը թոյլ չեն տար իւրաքանչիւր հիւանդութեան մասին մանրամասնութիւններու մէջ մտնելու: Միայն շեշտենք որ, եթէ համեմատութիւն մը փնտռել հարկ ըլլայ, սիֆիլիսը՝ հարիւրին ութսուն համեմատութեամբ, պատճառ կ'ըլլայ վիժումներու, մեռած կամ ողջ երախաներու կանխաճառ ծննդաբերութեան: Ողջ ծնածներն ալ յաճախ կ'ունենան սիֆիլիսի միջբոլոր և այդպէս՝ վիժածներու սերունդ մը կը կազմեն:

Արդ, ներկայիս բժշկութիւնը կրնայ հպարտանալ, թէ ի վիճակի է բոլոր այս ազէտներուն առաջքը առնել կանոնաւորաբար դարմանելով մայրը՝ յղութեան շրջանին: Այդ կերպով կը փրկէ տղուն կեանքը, որ հաւանաբար պիտի կորսուէր, և ծննդաբերութենէն վերջ, շարունակելով նորածինին դարմանումը, կը կանխէ անոր սպառնացող շատ մը ծանր հիւանդութիւնները:

Ձերմամբուլութիւնը, եթէ յղութեան շրջանին բարդութիւն մը առաջ չի բերեր, նոյնը չէ սակայն ծննդաբերութեան ընթացքին: Ջերմամբութեան մանրէն (*gonocoque*), որ կը գտնուի միզանցքին կամ ծննդական դործարաններուն մէջ, կրնայ վարակել նորածինին աչքերը, և առկէ պատճառել սոսկալի հիւանդութիւն մը, թարախոտ աչացաւ մը (*ophthalmie purulente*), որ եթէ լաւ չի նամուի, 90 0 0 կը կուրացնէ: Փարիզի նկղեցիին բուժարանը հանդիպեցայ շատ մը պղտիկներու, որոնք իրենց աչքը կորսնցուցած էին, պարզապէս անոր համար, որ իրենց ծնողքը անտեսած էին բժիշկին դիմել ասանկ ծանր պարագայի մը տակ, և զոհացած անական դարմաններով:

Կոնքի ոսկորներուն անբնական վիճակը կամ անբաւականութիւնը, (որուն պատճառաւ անկարելի կ'ըլլայ, բնականոն պայմաններու տակ, երախային անցքը ծննդական դործարաններէն) որ յաճախ դէպ է անչափաճառ կիներու (13, 14, 15 տարեկան), կուզ, կաղ և կարգ մը ուրիշ ոսկրային հիւանդութիւն ունեցող կիներու քով, ինչպէս նաեւ արգանդի խոշոր ուռեր, պատճառ կ'ըլլան, որ բժիշկը խորհի, նպաստաւոր վայրկեանին, «Կեսարի դործողութեան» (*opération césarienne*). «Կեսարի» դործողութեամբ վիրաբոյժը կը բանայ որովայնը, կը ճեղքէ արգանդը և կ'առնէ տղան ու «ընկերը» իրենց թաղանթներով: Այս դործողութեան «կեսարեան» անունը տուած են անոր համար, որ հռովմայեցիները յղի կիները չէին թաղեր, առանց որովայնը ճեղքելու, և կը կարծուի թէ շատ մը Կեսարներ իրենց կեանքը այս դործողութեան կը պարտին: Մէկդի ձգելով այն կարգ մը ուրիշ հիւանդութիւնները, որ պատճառ կրնան ըլլալ բարդութիւններու, առնենք երախային կողմէ եկած բարդութիւնները:

Տղան կրնայ բնականէն աւելի մեծ ըլլալ, կշռել փոխանակ 7 լիպրայի (3½ քիլո) 10 և աւելի լիպրա։ Այդ պարագային նմանապէս հարկ կ'ըլլայ պէտք եղած միջոցները ձեռք առնել և, եթէ ծնընդարերութիւնը բնական ճամբով անկարելի է, դիմել կեսարեան գործողութեան և կամ ուրիշ գործողութեանց, որոնք նպատակ ունին ըստ կարելոյն լայնցնել կոնքին շրջագիծը։

Տղան կրնայ գէշ դիրքի մը մէջ ներկայանալ արգանդին մէջ։ Եթէ բժիշկը կը հետեւի յղութեան ընթացքին, կրնայ յաճախ շտկել այս յոռի դիրքերը և ծննդարերութիւնը տեղի կ'ունենայ բնական պայմաններու տակ։ Բայց եթէ վերջին ժամուն կը դիմեն իրեն, երբ արդէն օրերէ ի վեր խեղճ կինը ապարդիւն կը չարչարուի տղարիւրի համար, բժիշկը ստիպուած կ'ըլլայ զոհելու տղան, մօրը կեանքը փրկելու համար։

«Ընկերն» ալ իր կարգին կրնայ բարդութեան տեղի տալ։ Քանի քանի կիներ, յղութեան առաջին շրջանին արիւն կը կորսնցնեն. եթէ կանուխէն պէտք եղած խնամքը չտրուի, կրնայ վիժումի պատճառ ըլլայ։ Կը պատահի որ «ընկերը» պէտք եղած կերպով չի փակիր արգանդի պատին, այլ աւելի վար, ատոր պատճառաւ երեքմի կը զատուի անկէ և պատճառ կուտայ արիւնահոսումներու։

Կը պատահի որ բեղմնաւորումը պատճառ կ'ըլլայ անբնական կամ հրէշային արդասաւորութեան մը, իրեն հետ բերելով կարգ մը բարդութիւններ։ Բժիշկը միայն կրնայ իմանալ թէ իրաւի բնականոն թէ անբնական յղութեան մը առջեւ կը գտնուի։ Ուրիշ պարագաներու տակ՝ սաղմնային հեղուկն է, որ չափէն աւելի կ'ըլլայ և տեղի կուտայ ո՛չ միայն անկանոն տձեւութեանց, այլ և, ծննդարերութեան շրջանին՝ արկածներու, որպէսին է պորթի լարին սեղմու մը և տղուն շնչահեղձութիւնը։

Բառ մը եւս, երկուորեակներու, եռորեակներու, քառորեակներու մասին։ Ընդհանրապէս արդասաւորութիւնը կնոջ մօտ մէկ տղու ծնունդ կուտայ։ Բայց կը պատահի, որ գտնուին երկու և բացառաբար երեք և չորս տղաք։ Դիւրին բան չէ երկուորեակ յղութիւնը, ուր միաց միւսները։ Որքան աչալուրջ հսկողութիւն պէտք է յղութեան ընթացքին, արգիլելու համար կանխաճառ ծնընդարերութիւն մը, որ միայն աննպաստ կրնայ ըլլալ տղոց համար։

Չեմ ուզեր աւելի երկարել։ Իմ նպատակս չէր արդէն յղութեան ամէն անբնական երեւոյթներու մասին մանրամասն տեղեկութիւն տալ, այլ շեշտել թէ յղի կնոջ համար, առողջապահական կարգ մը կանոններ և բժշկական հսկողութիւնը անհրաժեշտութիւն մըն են։